ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԶՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014թ.-01.09.2015թ.համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ Բ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԶՈՐԱՎԱՆ 2015

Հարգելի Զորավանցիներ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ

Եկամուտների վերլուծություն

2013թ. դեկտեմբերի 13-ին համայնքի ավագանին N 41-Ն որոշմամբ ընդունել է 2014թ. բյուջեն, որը եկամուտների գծով կատարվել է 139,68%-ով, բյուջեով նախատեսված 34450.300 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 48121.500 հազար դրամ:

Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի մասով կատարվել է 96.22%-ով, նախատեսված 32450.3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 31222.2 հազար դրամ:

- Գույքահարկի գծով փաստացի մուտքը 1660.0 հազար դրամի դիմաց կազմել է 2245.7 հազար դրամ, կատարվել է 135.28%-ով:
- Հողի հարկի գծով նախատեսված 4255.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 3506.12 հազար դրամ, կատարվել է 82.4%-ով:
- Տեղական տուրքերը նախատեսված 224.0 հազար դրամի դիմաց կազմել են 259.72 հազար դրամ, կատարվել են 115.95%-ով:
- Այլ եկամուտները նախատեսված 5732.0 հազար դրամի դիմաց կազմել են4442.61 հազար դրամ, կատարվել է 77.5%-ով:

  Այդ թվում՝

  --Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներից եկամուտները կատարվել են 76.65%-ով, նախատեսված 5350.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 4100.61 հազար դրամ:

  -- Գույքի վարձակալությունից եկամուտները կատարվել են 100%-ով, հավաքագրվել է պլանավորված 132.0 հազար դրամը:

  -- Տեղական վճարները նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց կազմել են 80.0 հազար դրամ, կատարվել են 80.0%-ով:

- Պետության կողմից ՏԻՄ-ին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախատեսված 20579,3 հազար դրամի դիմաց կազմել են20629,2 հազար դրամ, կատարվել են 100,24%-ով:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի մասով կատարվել է 844,97%-ով, նախատեսված 2000,0 հազար դրամի դիմաց մուտքերը կազմել են 16899,3 հազար դրամ:

Ծախսերի վերլուծություն

Զորավան համայնքի 2014թ բյուջեն ծախսերի գծով կատարվել է 92,08%-ով, նախատեսված 64627,7 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 59510,2 հազար դրամ, այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով՝ 96,06%, նախատեսված 32450,3 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 31172,1 հազար դրամ:
- Ֆոնդային բյուջեի մասով՝ 88,07%, նախատեսված 32177,4հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 28338,1հազար դրամ:

2015թ

Եկամուտների վերլուծություն

2014թ. դեկտեմբերի 15-ին համայնքի ավագանին N 34-Ն որոշմամբ ընդունել է 2015թ. բյուջեն, որը առ 01.09.2015թ դրությամբ եկամուտների գծով կատարվել է 85,35%-ով, բյուջեով նախատեսված 35420,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 30229,821 հազար դրամ:

Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի մասով կատարվել է 100.45%-ով, նախատեսված 24920,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 25032,821 հազար դրամ:

- Գույքահարկի գծով փաստացի մուտքը 960.0 հազար դրամի դիմաց կազմել է 1374,67 հազար դրամ, կատարվել է 143.2%-ով:
- Հողի հարկի գծով նախատեսված 2480.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 2278.2 հազար դրամ, կատարվել է 91.86%-ով:
- Տեղական տուրքերը նախատեսված 168.0 հազար դրամի դիմաց կազմել են 197.0 հազար դրամ, կատարվել են 117.26%-ով:
- Այլ եկամուտները նախատեսված 3386.0 հազար դրամի դիմաց կազմել են3174.05 հազար դրամ, կատարվել է 93.74%-ով:

  Այդ թվում՝

  --Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներից եկամուտները կատարվել են 93.78%-ով, նախատեսված 2740.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 2569.62 հազար դրամ:

  -- Գույքի վարձակալությունից եկամուտները կատարվել են 100%-ով, հավաքագրվել է պլանավորված 132.0 հազար դրամը:

  -- Տեղական վճարները նախատեսված 450.0 հազար դրամի դիմաց կազմել են 438.43 հազար դրամ, կատարվել են 97.43%-ով:

- Պետության կողմից ՏԻՄ-ին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախատեսված 17926,2 հազար դրամի դիմաց կազմել են17988,9 հազար դրամ, կատարվել են 100,35%-ով:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի մասով կատարվել է 49,5%-ով, նախատեսված 10500,0 հազար դրամի դիմաց մուտքերը կազմել են 5197,0 հազար դրամ:

Ծախսերի վերլուծություն

Զորավան համայնքի 2015թ բյուջեն առ 01.09.2015թ դրությամբ ծախսերի գծով կատարվել է 50,67%-ով, նախատեսված 60667,8 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 30740,149 հազար դրամ, այդ թվում՝

- Վարչական բյուջեի մասով՝ 84,87%, նախատեսված 26929,2 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 22853,812 հազար դրամ:
- Ֆոնդային բյուջեի մասով՝ 23,37%, նախատեսված 33738,6 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 7886,337 հազար դրամ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համայնքի առավել կարիքավոր ընտանիքներին և ընտանիքի անդամին կորցրած ընտանիքներին տրամադրվել է 1640,0 ՀՀ դրամական օգնություն, որից՝

- 15 ընտանիք ստացել է ընտանիքի անդամի մահվան համար միանվագ հրատապ օգնություն /յուրաքանչյուր ընտանիք ստացել է 40,0 հազար դրամ/: Այդ ընտանիքներն ընդհանուր հաշվով ստացել են 600,0 0 հազար դրամ:
- Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած 26 անապահով ընտանիքներին ընդհանուր հաշվով տրվել են 1040,0 հազար դրամի օգնություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Զորավանի գյուղապետարանի ենթակայությամբ գործում է 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն և 1 գրադարան: Համայնքն ունի 1 դպրոց, որին 2015թ. ընթացքում գյուղապետարանը նվիրել է 450,0 հազար դրամի վարչական գույք: Գրադարանը ունի 1 աշխատող և շուրջ 5934 գրքային ֆոնդ: ՆՈՒՀ են հաճախում 60 երեխա, որոնց պահպանման ծախսերի շուրջ 80-90% հոգում է գյուղապետարանը: ՆՈՒՀ-ն ակտիվորեն մասնակցել է համայնքում կազմակերպված բոլոր միջոցառումներին, տեղում անցկացրել հանդեսներ՝ նվիրված գրեթե բոլոր տոներին և հիշատակի օրերին: Մարտի 8-ի, ապրիլի 7-ի, սեպտեմբերի 1-ի, ուսուցչի տոնի և ամանորի կապակցությամբ համայնքում կազմակերպված միջոցառումների ժամանակ տրվել են նվերներ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014 թվականի հունվարի 1-ից մինչ օրս համայնքում՝

- Կանոնավոր կերպով շաբաթական 2 անգամ կազմակերպվել է աղբահանություն:
- Ձմռան ամիսներին կազմակերպվել է ձյան մաքրման աշխատանքները:
-Կազմակերպվել է համայնքի փողոցների լուսավորության սպասարկման, շահագործման և վերականգնման աշխատանքները:
- Խաչքար հուշարձանի տարածքում ստեղծվել է կանաչապատ տարածք և ձեավորվել է ծաղկանոց:

իրականացվել է

- 2-րդ փողոցի կոյուղու համակարգի կառուցման աշխատանքներ:
- Զորավան համայնքի գերեզմանատան ջրագծի անցկացման աշխատանքներ:
- Զորավան համայնքի խաչքար հուշարձանի հիմնանորոգման աշխատանքներ:
- Զորավան համայնքի գյուղապետարանի վարչական շենքի մասնակի վերանորոգման աշխատանքներ:
-Զորավան համայնքի մանկապարտեզի բակի բարեկարգման և կահավորման աշխատանքներ:
- ՀՀ Կոտայքի մարզի Զորավան գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները, որն անցնելով փորձաքննության և համաձայնեցումների բոլոր փուլերը հաստատվեց 2014թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ քաղաքաշինության նախարարությունը կողմից, իսկ 2014թ. նոյեմբերի 11-ին Զորավան գյուղական համայնքի ավագանու կողմից:

ընթացքի մեջ է
-Զորավան համայնքի 2-րդ փողոցի ճանապարհի բարեկարգման աշխատանքները:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հաշվետու ժամանակաշրջանում օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հսկողություն է իրականացվել առևտրի, կենցաղային և հանրային 4 օբյեկտներում:
-Առևտրի 1 օբյեկտին տրվել է հեղուկ վառելիքի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն:
-Առևտրի 3 օբյեկտներին տրվել է ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ. հունիսի 23-ին, հոկտեմբերի 14-ին և 2015թ. մարտի 20-ին, հուլիսի 7-ին կայացել են Զորավան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում օտարվել են 2014թ-ին 38.65 հա և 2015թ-ին 8.46 հա վարելահող: Աճուրդների արդյունքում համայնքի բյուջե 2014թ-ին մուտք է եղել 16899.3 հազար դրամ, իսկ 2015թ-ին՝ 5197.0 հազար դրամ, ընդամենը 22096.3 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ԹՈՎՄԱՍՅԱՆ